



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 117-Ս

ք. Երևան

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 42-րդ հոդվածի 19-րդ մասով և 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների և օպերատորների գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների և օպերատորների գործունեության ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով մշտադիտարկման արդյունքում տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտում արձանագրելու դեպքում կազմել մշտադիտարկման (ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով) իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն N 1 Հավելվածի:

3. Օպերատորների գործունեության տեղում դիտարկում իրականացնելու միջոցով մշտադիտարկման արդյունքում կազմել մշտադիտարկման (տեղում դիտարկում իրականացնելու միջոցով) իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն N 2 Հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

28 սեպտեմբերի 2020թ.

ք. Երևան

Հավելված N 1
Մահմանված է
Հեռուստատեսության և
ռադիոյի հանձնաժողովի
2020 թվականի սեպտեմբերի 28-ի
թիվ 117-Ա որոշմամբ

Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՈՒՂՂԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑՈՎ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

թ. _____

« » _____ ի 20__ թ.

Ես՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի

_____ ,
(մշտադիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

և _____

(տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի կամ օպերատորի լրիվ անվանումը)

_____ գործունեության մշտադիտարկման արդյունքում

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

արձանագրել եմ.

_____ ,
(Մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները: Նշում է կատարվում մշտադիտարկման նպատակի, ժամանակահատվածի և իրավական հիմքերի մասին: Նշում է կատարվում նաև մշտադիտարկման առարկային վերաբերող ապացույցների մասին և կցվում է սույն արձանագրությանը:)

Դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման դեպքում նշվում են նաև դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը:

Մշտադիտարկում իրականացրած անձ (Հանձնաժողովի ներկայացուցիչ)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՏԵՂՈՒՄ ԴԻՏԱՐԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

թ. _____

« » _____ի 20___թ.

Հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի 20____
թվականի _____ի _____-ի թիվ _____-
հրամանը Հանձնաժողովի _____,

(մշտադիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ի կողմից _____

(օպերատորի լրիվ անվանումը)

իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվեց հետևյալը.

(Մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական
վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա
հանգամանքները: Նշում է կատարվում մշտադիտարկման առարկային վերաբերող օպերատորի տիրապետության տակ գտնվող
ապացույցների մասին և կցվում է սույն արձանագրությանը:)

Մշտադիտարկում իրականացրած անձ (Հանձնաժողովի ներկայացուցիչ)

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Օպերատորի ղեկավարի կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի (այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ և արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի (կանոնադրության, հրամանի, որոշման, լիազորագրի կամ այլ փաստաթղթի) պատճենը, որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինելու օպերատորի ղեկավարին) առարկությունները:

Օպերատորի ղեկավար (օպերատորի ներկայացուցիչ)

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Եթե օպերատորի ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունը ստորագրել կամ այլ կերպ խոչընդոտում է տեղում դիտարկման իրականացմանը, ապա Հանձնաժողովի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ՝ նշելով նաև մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած օպերատորի ներկայացուցչի անունը, ազգանունը և պաշտոնը:
